STATE OF CALIFORNIA—HEALTH AND HUMAN SERVICES AGENCY
DEPARTMENT OF SOCIAL SERVICES
744 P Street • Sacramento, CA 95814 • *www.cdss.ca.gov*

KIM JOHNSON
DIRECTOR

GAVIN NEWSOM
GOVERNOR

Մարտի 16, 2020թ.

ՈՒՄ՝ ՏՆԱՅԻՆ ԱՋԱԿՑՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՄԱՏՈՒՑՈՂՆԵՐԻՆ

ԹԵՄԱ՝ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ 2019Թ. ԿՈՐՈՆՈՎԻՐՈՒՍԱՅԻՆ ՀԻՎԱՆԴՈՒԹՅԱՆ (ԿՈՎԻԴ-19) ՄԱՍԻՆ ՏՆԱՅԻՆ ԱՋԱԿՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՄԱՏՈՒՑՈՂՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Այս նամակը ուղարկվում է տնային աջակցման ծառայություններ մատուցողներին (IHSS)՝ 2019 թ-ի կորոնովիրուսային հիվանդության (ԿՈՎԻԴ-19) մասին լրացուցիչ տեղեկություններ հաղորդելու նպատակով:

Դուք ստանում եք այս նամակը, քանի որ, հնարավոր է, դուք տրամադրում եք IHSS-ի ծառայություններ մեկ կամ մի քանի ծառայություններ ստացողների, որոնք հնարավոր է պատկանում են այն մարդկանց խմբերից մեկին, որոնց Կալիֆորնիայի նահանգապետը կամ ձեր տեղական իշխանությունները կոչ են արել մեկուսանալ ձեր տներում՝ հիվանդանալուց խուսափելու համար:

ԿՈՎԻԴ-19-ը կարող է առաջացնել թեթևից մինչև միջին ծանրության շնչառական հիվանդություն: Ախտանշանները շատ նման են գրիպի, այդ թվում՝ ջերմություն, հազ և/կամ հևոց:

Դուք կարող եք պաշտպանել ինքներդ ձեզ և ձեր IHSS ծառայությունները ստացողին(ներին)՝

- Հաճախ լվանալով ձեր ձեռքերը օճառով և ջրով առնվազն 20 վայրկյան, հատկապես խնչելուց, հազալուց, փռշտալուց կամ հասարակական վայրում գտնվելուց հետո:
- Խուսափելով անլվա ձեռքերով կպնել ձեր աչքերը, քիթը կամ բերանը:
- Խուսափելով սերտ շփումներից այն մարդկանց հետ, ովքեր հիվանդ են:
- Հեռու մնալով աշխատանքից, դպրոցից և այլ մարդկանցից, եթե դուք հիվանդանում եք և ունեք բարձր ջերմություն, հազ կամ շնչառական ախտանիշներ:
- Վերացնելով կամ նվազագույնի հասցնելով այցելուների թիվը:

Խնդրում ենք նկատի ունենալ, որ որոշակի չափանիշների շեմն անցնելուց հետո, IHSS-ի մատակարարները ստանում են հիվանդության արձակուրդի ութ (8) ժամ:

Ձեր հիվանդության արձակուրդի ժամերը կարող եք պահանջվել էլեկտրոնային ծառայությունների պորտալի միջոցով կամ լրացնելով հիվանդության արձակուրդի թերթիկ (SOC 2302): IHSS մատակարարները, բացի IHSS-ի բոլոր աշխատած ժամերից, կարող են հիվանդության արձակուրդի կուտակված օրերն օգտագործել առանց արտաժամյա աշխատանքի ժամաքանակը խախտելու: Դուք կարող եք գտնել հիվանդության արձակուրդի այն ժամաքանակը, որը իրավունք ունեք հավակնել ձեր աշխատավարձի վճարման կտրոնում:

Եթե դուք հիվանդ եք կամ զգում եք վերը նշված ախտանիշները, ապա խորհուրդ է տրվում չհայտնել այդ մասին ձեր ծառայությունը ստացողի տանը: Փոխարենը, դուք պետք է զանգահարեք ձեր IHSS ծառայությունը ստացողին և տեղեկացնեք նրան ձեր հիվանդանալու մասին, որպեսզի նա կարողանա կապվել մեկ այլ մատակարարի կամ իր վարչաշրջանի տեղային գրասենյակի հետ՝ այլ մատակարարի որոնման հարցում օգնություն խնդրելու համար:

Խնդրում ենք հաշվի առնել, որ եթե դուք չեք զգում որևէ ախտանիշ և ձեր ԿՈՎԻԴ-19 թեստի արդյունքները դրական չեն, ապա դուք պետք է շարունակեք ծառայություններ մատուցել ձեր IHSS ծառայություն ստացողին: Նահանգը և վարչաշրջանը ջանասիրաբար աշխատում են՝ ձեր և ձեր ծառայությունը ստացողի անվտանգությունն ու առողջությունն ապահովելու համար: Խնդրում ենք հետևել այս նամակում նկարագրված ցուցումներին և հիվանդանալուց խուսափելու համար լվանալ ձեր ձեռքերը առնվազն 20 վայրկյան, չդիպչել ձեր դեմքը և հետևել այլ հավաքների կամ միջոցառումների վերաբերյալ հանրային առողջության մասին ցուցումներին:

Որոշակի հանգամանքներում, դուք կարող եք իրավասու լինել Գործազրկության ապահովագրության նպաստներ, Ընտանեկան արձակուրդ և Հաշմանդամության ապահովագրության նպաստներ ստանալու համար: Լրացուցիչ տեղեկությունների համար խնդրում ենք դիմել Զբաղվածության զարգացման բաժին ՀՏՀԵը և Աշխատանքի և աշխատուժի զարգացման գործակալություն Ռեսուրսներ գործատուների և աշխատողների համար:

Խնդրում ենք նաև դիտել CDPH-ի կայքը՝ ԿՈՎԻԴ-19-ի մասին ավելի ընդհանուր տեղեկություններ ստանալու համար: